




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«05» ապրիլի 2017թ

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետի տեղակալ

 Հ. Այունց

ԳԲԽ-35/17 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Ջ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ Կենտրոն) կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Արտֆլոր» ՍՊԸ-ի 20.03.2017թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Արտֆլոր» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Արտֆլոր» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 20.03.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Շիրակի մարզպետարանն 01.03.2017թ. հայտարարել է գնման ընթացակարգ («ՇՄ ԲԸՀԱՇՁԲ 17/02» ՀՀ Շիրակի մարզպետարանի կարիքների համար՝ Ազատան համայնքի բժշկական ամբուլատորիայի շենքի, Ախուրյան համայնքի բռնցքամարտի դպրոցի մասնակի, Արթիկ համայնքի Սասունցի Դավիթ փողոցի թիվ 2/3 բազմաբնակարան բնակելի շենքի տանիքի մասնակի, Պեմզաշեն համայնքի 7-րդ փողոցի 21 բազմաբնակարան բնակելի շենքի տանիքի եվ Մարալիկ համայնքի Մադաթյան փողոցի

թիվ 1ա բազմաբնակարան բնակելի շենքի տանիքի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված բանակցային ընթացակարգի) և բացման օր է սահմանել 15.03.2017թ.

«Արտֆլոր» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել հիշյալ գնման ընթացակարգի 1,2 չափաբաժինների համար: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.03.2017թ. թիվ 2 արձանագրությամբ որոշում է կայացվել 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով «Արտֆլոր» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ այն պատճառաբանությամբ, որ հավելված թիվ 9-ում առկա չէ հաշվապահի էլեկտրոնային թվային ստորագրությունը:

«Արտֆլոր» ՍՊԸ-ն գտնում է, որ Ընկերության հայտում տուժանքի մասին համաձայնությունը (հավելված 9) սահմանված կարգով ստորագրված է եղել Ընկերության հաշվապահի գրաֆիկական և Ընկերության տնօրենի էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Ընկերությունը նշել է նաև, որ «Արտֆլոր» ՍՊԸ-ի հայտի մերժման հիմք է հանդիսանում նաև հավելված թիվ 9-ում ներկայացված տուժանքի մասին համաձայնագրի 1.1 կետում գնման առարկայի անվանումը դաշտի ոչ ճիշտ լրացումը, մինչդեռ ՀՀ ֆինանսների նախարարի 02.08.2013թ. թիվ 667-Ա հաստատված օրինակելի ձևերի համաձայն՝ նշված դաշտը լրացվում է Պատվիրատուի կողմից:

«Արտֆլոր» ՍՊԸ-ն գտնում է, որ «ՇՄ ԲԸՀԱՇՁԲ 17/02» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասը, 31-րդ հոդվածի 1-ին մասը, ինչպես նաև ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշման հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 35-րդ կետի 9-րդ ենթակետը:

Վերլուծելով վերը նշված նորմերը՝ Ընկերությունը գտնում է, որ «Արտֆլոր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը և նրանցում պարունակվող փաստաթղթերը պատշաճ ձևով ներկայացված են եղել դրանք ներկայացնող անձի (Ընկերության տնօրենի) կողմից, իսկ թիվ 9 հավելվածի՝ տուժանքի մասին համաձայնագրի հաստատումը հաշվապահի էլեկտրոնային թվային ստորագրությամբ չի կարող հանդիսանալ պարտադիր պայման:

Ընկերությունը խնդրել է դադարեցնել «Արտֆլոր» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը և Ընկերության հայտը գնահատել բավարար:

2. ՀՀ Շիրակի մարզպետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

Կենտրոնը 21.03.2017թ.-ին Պատվիրատուին ուղարկված թիվ 02/04.1/1095-17 գրությամբ՝ խնդրել է եռօրյա ժամկետում տալ կարծիք «ՇՄ ԲԸՀԱՇՁԲ 17/02» ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ:

Պատվիրատուն 23.03.2017թ. թիվ 03/06.4/2175-17 գրությամբ պատասխանել է Կենտրոնի 21.03.2017թ. թիվ 02/04.1/1095-17 գրությանը և հայտնել, որ ՀՀ Շիրակի մարզպետարանը ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 16-ի թիվ 153-Ն որոշմամբ ՀՀ Շիրակի մարզպետարանին հատկացված միջոցների հաշվին իրականացվելիք ՀՀ Շիրակի մարզի Ազատան համայնքի բժշկական ամբուլատորիայի շենքի, Ախուրյանի համայնքի բռնցքամարտի դպրոցի մասնակի, Արթիկ համայնքի Սասունցի Դավիթ փողոցի թիվ 2/3 բազմաբնակարան բնակելի շենքի տանիքի մասնակի, Պեմզաշեն համայնքի 7-րդ փողոց 21 բազմաբնակարան բնակելի շենքի տանիքի և Մարալիկ համայնքի Մադաթյան փողոցի թիվ 1-ա բազմաբնակարան բնակելի շենքի տանիքի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպել է թիվ «ՇՄ ԲԸՀԱՇՁԲ 17/02» ծածկագրով գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգը՝ 5 չափաբաժիններով:

«ՇՄ ԲԸՀԱՇՁԲ 17/02» ծածկագրով գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի հրավերը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 2017 թվականի մարտի 2-ի թիվ 2 որոշմամբ: Մրցույթը անցկացվել է էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am կայքի) համակարգի միջոցով: Հրավերը հրապարակվել է նաև www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում: Ընթացակարգի հրավերը կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության, այդ թվում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի, ՀՀ ֆինանսների նախարարի 28 փետրվարի 2017 թվականի թիվ 72 -Ա հրամանով հաստատած օրինակելի ձևի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Սահմանված ժամկետում բանակցային ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել թվով 20 կազմակերպություններ:

Հայտերի էլեկտրոնային ձևով բացումը և գնահատումը իրականացվել է հայտերի բացման նիստում, որը կայացել է 2017 թվականի մարտի 15-ին ժամը 10¹⁵ -ին ՀՀ Շիրակի մարզպետարանում:

Հրավերի պահանջներին համապատասխան հայտեր (որոնց Armeps համակարգը դիտել է որպես ներկայացված հայտեր) կազմել և ներկայացրել են բոլոր մասնակից կազմակերպությունները:

Մասնակիցներից «Արտֆլոր» ՍՊԸ կողմից ներկայացրած հայտում («Արտ ֆլոր» ՍՊԸ մասնակցել է միայն 1-րդ և 2-րդ չափաբաժիններին) հայտի ապահովումը /թիվ 9 հավելված/ ներկայացվել է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով: Որտեղ բացակայում է գլխավոր հաշվապահի էլեկտրոնային թվային ստորագրությունը, բացի այդ գնման առարկայի անվանումը սխալ է նշված: Հայտի ապահովումը չի համապատասխանում հրավերի պահանջներին: Հայտը 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով գնահատվել է անբավարար և մերժվել է (համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի 4) ենթակետի և 45-րդ կետի):

Այսպիսով համաձայն հրավերի 7.1.1 կետի հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժել է այն հայտերը (այդ թվում նաև «Արտֆլոր» ՍՊԸ), որոնցում բացակայել են հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված հայտերի ապահովումները:

Բոլոր հայտերը գնահատվել են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվել միայն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը:

Պատվիրատուն տեղեկացրել է նաև, որ ՀՀ Շիրակի մարզպետարանը 2017 թվականի մարտի 20-ին թիվ 02.2/2115-17 գրությամբ դիմել ՀՀ ֆինանսների նախարարություն թիվ «ՇՄ ԲԸՀԱՇԶԲ 17/02» ծածկագրով գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի հայտերի մերժման հիմքերի վերաբերյալ պարզաբանում ստանալու ակնկալիքով:

Թիվ «ՇՄ ԲԸՀԱՇՁԲ 17/02» գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում և համակարգի միջոցով տրամադրվել բոլոր մասնակիցներին:

Գնման գործընթացը ժամանակավոր դադարեցվել է մինչև ՀՀ ֆինանսների նախարարությունից պարզաբանում ստանալը:

Պատվիրատուն հավաստել է, որ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումները չեն հանգեցրել գնման գործընթացի մասնակիցների շահերի ոտնահարմանը, իսկ ահազանգի վերաբերյալ մեր դիրքորոշում կհայտնենք ՀՀ ֆինանսների նախարարությունից պարզաբանում ստանալուց հետո:

Ի լրումն 23.03.2017թ. թիվ 03/06.4/2175-17 գրության՝ Պատվիրատուն 28.03.2017թ. թիվ 03/06.4/2305-17 գրությամբ հայտնել է, որ ՀՀ Շիրակի մարզպետարանի թիվ «ՇՄ ԲԸՀԱՇՁԲ 17/02» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 2017 թվականի մարտի 15-ին կայացած հայտերի բացման նիստում անբավարար է գնահատել և մերժել է այն հայտերը, որոնցում մասնակցի կողմից ներկայացված հայտի ապահովումը (թիվ 9 հավելվածը՝ միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով) չի համապատասխանել հրավերի պահանջներին:

Պատվիրատուն նշել է, որ «ՇՄ ԲԸՀԱՇՁԲ 17/02» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումները չեն հանգեցրել գնման գործընթացի մասնակիցների շահերի ոտնահարմանը և 2017 թվականի մարտի 20-ին «Արտֆլոր» ՍՊԸ-ի «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը ենթակա է մերժման:

ՀՀ Շիրակի մարզպետարանը նույն հարցի վերաբերյալ 20.03.2017թ. թիվ 02.2/2115-17 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը (այսուհետ նաև՝ Նախարարություն):

Ի պատասխան Պատվիրատուի վերոհիշյալ գրությամբ՝ Նախարարությունը 28.03.2017թ. N 04/73-1/5407-17 գրությամբ հայտնել է, որ «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը պատասխանատվություն է կրում հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում կազմակերպելու համար:

Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ կազմակերպությունում հաշվապահական հաշվառման ընդհանուր վարումը և ֆինանսական հաշվետվությունների կազմումն իրականացնում է հաշվապահական ծառայության ղեկավարը, իսկ հաշվապահական ծառայություններ մատուցող կազմակերպության միջոցով հաշվապահական հաշվառումը վարելու դեպքում՝ այդ կազմակերպության լիազորած անձը կամ Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված այլ անձը (այսուհետ՝ գլխավոր հաշվապահ)՝ հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան: Ընդ որում Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հաշվապահական հաշվառման աշխատանքների ծավալից կախված՝ կազմակերպության ղեկավարն իրավունք ունի հաշվապահական հաշվառումը վարել՝

- կառուցվածքային ստորաբաժանում համարվող հաշվապահական ծառայության միջոցով,

- կազմակերպության աշխատակիցը համարվող հաշվապահի միջոցով,

- հաշվապահական ծառայություններ մատուցող կազմակերպության կամ անհատ ձեռնարկատերերի, իսկ կուսակցությունների, հասարակական և կրոնական կազմակերպությունների համար՝ նաև անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց միջոցով,

- անձամբ:

Վերոգրյալով պայմանավորված և նկատի ունենալով, որ ՀՀ ֆինանսների նախարարի 02.08.2013թ. թիվ 667-Ա հրամանով հաստատված հրավերների օրինակելի ձևերին կից ներկայացված տուժանքի մասին համաձայնագրի վավերապայմաններով սահմանված է ընկերության տնօրենի և գլխավոր հաշվապահի ստորագրության պահանջ, Նախարարությունը հայտնել է հետևյալը.

1. եթե կազմակերպությունում հաշվապահական հաշվառման ընդհանուր վարումը և ֆինանսական հաշվետվությունների կազմումն իրականացվում է հաշվապահական ծառայության կամ կազմակերպության աշխատակիցը համարվող հաշվապահի միջոցով, ապա տուժանքի մասին համաձայնագիրը գլխավոր հաշվապահի մասով պետք է էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվի համապատասխանաբար հաշվապահական ծառայության ղեկավարի կամ հաշվապահի կողմից.

2. հաշվապահական ծառայություններ մատուցող կազմակերպության միջոցով հաշվապահական հաշվառումը վարելու դեպքում՝ տուժանքի մասին համաձայնագիրը գլխավոր հաշվապահի մասով պետք է էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվի այդ կազմակերպության լիազորած անձի կողմից.

3. եթե հաշվապահական հաշվառումը վարվում է կազմակերպության ղեկավարի կողմից անձամբ, ապա տուժանքի մասին համաձայնագիրը ներկայացվում է առանց գլխավոր հաշվապահի ստորագրության: Ընդ որում, եթե տուժանքի մասին համաձայնագիրը ներկայացվել է միայն կազմակերպության ղեկավարի ստորագրությամբ, ապա մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, նկատի ունենալով, որ տվյալ դեպքում հաշվապահական հաշվառումը վարվում է կազմակերպության ղեկավարի կողմից անձամբ:

Նախարարությունը գտնում է, որ վերոնշյալ պահանջներին չբավարարելու, ինչպես նաև նույն գրության հիշյալ կետի 3-րդ և 5-րդ պարբերություններում նշված դեպքերում մասնակցի հայտը ենթակա է մերժման:

3. ԳԲԽ-35/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող

փաստերը

ԳԲԽ-35/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ Շիրակի մարզպետարանը 01.03.2017թ. հայտարարել է «ՀՄ ԲԸՀԱՇՁԲ 17/02» ծածկագրով բանակցային ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցել է նաև «Արտֆլոր» ՍՊԸ-ն:

2. «Արտֆլոր» ՍՊԸ-ի հայտում տուժանքի մասին համաձայնությունը (հավելված թիվ 9) սահմանված կարգով ստորագրված է եղել Ընկերության հաշվապահի գրաֆիկական և տնօրենի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ինչպես նաև Ընկերության կողմից ներկայացված տուժանքի մասին համաձայնագրի 1.1 կետում գնման առարկայի անվանումը դաշտում նշվել է գնման առարկայի ամբողջական անվանումը «ՀՀ Շիրակի մարզպետարանի կարիքների համար՝ Ազատան համայնքի բժշկական ամբուլատորիայի շենքի, Ախուրյան համայնքի բռնցքամարտի դպրոցի մասնակի, Արթիկ համայնքի Սասունցի Դավիթ փողոցի թիվ 2/3 բազմաբնակարան բնակելի շենքի տանիքի մասնակի, Պեմզաշեն համայնքի 7-րդ փողոցի 21 բազմաբնակարան բնակելի շենքի տանիքի եվ

Մարալիկ համայնքի Մադաթյան փողոցի թիվ1-ա բազմաբնակարան բնակելի շենքի տանիքի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման»:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.03.2017թ. թիվ 2 արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ «Արտֆլոր. ՍՊԸ-ի հայտի ապահովումը՝ թիվ 9 հավելվածը ներկայացվել է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով, որտեղ բացակայում է գլխավոր հաշվապահի էլեկտրոնային թվային ստարագրությունը, ինչպես նաև սխալ է նշվել գնման առաջկայի անվանումը, ինչով պայմանավորված գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել «Արտֆլոր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

4. ԳԲԽ-35/17 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Արտֆլոր» ՍՊԸ-ի 20.03.2017թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, Շիրակի մարզպետարանի 20.03.2017թ. թիվ 02.2/2115-17, 23.03.2017թ. թիվ 03/06.4/2175-17 և 28.03.2017թ. թիվ 03/06.4/2305-17 գրությունները, ՀՀ ֆինանսների նախարարության 28.03.2017թ. թիվ 04/73-1/5407-17 գրությունը, Շիրակի մարզպետարանի կողմից հայտարարված «ՇՄ ԲԸՀԱՇՁԲ 17/02» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգի հրավերը (այսուհետև նաև՝ Հրավեր), գտնում ենք, որ «Արտֆլոր» ՍՊԸ-ի 20.03.2017թ. ներկայացրած բողոքը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 35-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է, որ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկությունները էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ

պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Ընդ որում, տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) **հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ**, որի հավաստագիրը զետեղված է «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով՝ բացառությամբ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելու դեպքերի, որոնց ժամանակ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելիս փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտով փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Վերոհիշյալ դրույթը սահմանվել է նաև «ՇՄ ԲԸՀԱՇՁԲ 17/02» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով:

«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը պատասխանատվություն է կրում հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում կազմակերպելու համար:

Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ կազմակերպությունում հաշվապահական հաշվառման ընդհանուր վարումը և ֆինանսական հաշվետվությունների կազմումն իրականացնում է հաշվապահական ծառայության ղեկավարը, իսկ հաշվապահական ծառայություններ մատուցող կազմակերպության միջոցով հաշվապահական հաշվառումը վարելու դեպքում՝ այդ կազմակերպության լիազորած անձը կամ Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված այլ անձը (այսուհետ՝ գլխավոր հաշվապահ)՝ հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի

պահանջներին համապատասխան: Ընդ որում Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հաշվապահական հաշվառման աշխատանքների ծավալից կախված՝ կազմակերպության ղեկավարն իրավունք ունի հաշվապահական հաշվառումը վարել՝

- կառուցվածքային ստորաբաժանում համարվող հաշվապահական ծառայության միջոցով,

- կազմակերպության աշխատակիցը համարվող հաշվապահի միջոցով,

- հաշվապահական ծառայություններ մատուցող կազմակերպության կամ անհատ ձեռնարկատերերի, իսկ կուսակցությունների, հասարակական և կրոնական կազմակերպությունների համար՝ նաև անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց միջոցով,

- անձամբ:

Վերոգրյալով պայմանավորված և նկատի ունենալով, որ ՀՀ ֆինանսների նախարարի 02.08.2013թ. թիվ 667-Ա հրամանով հաստատված հրավերների օրինակելի ձևերին կից ներկայացված տուժանքի մասին համաձայնագրի վավերապայմաններով սահմանված է ընկերության տնօրենի և գլխավոր հաշվապահի ստորագրության պահանջ, Նախարարությունը հայտնել է որ.

1. եթե կազմակերպությունում հաշվապահական հաշվառման ընդհանուր վարումը և ֆինանսական հաշվետվությունների կազմումն իրականացվում է հաշվապահական ծառայության կամ կազմակերպության աշխատակիցը համարվող հաշվապահի միջոցով, ապա տուժանքի մասին համաձայնագիրը գլխավոր հաշվապահի մասով պետք է էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվի համապատասխանաբար հաշվապահական ծառայության ղեկավարի կամ հաշվապահի կողմից.

2. հաշվապահական ծառայություններ մատուցող կազմակերպության միջոցով հաշվապահական հաշվառումը վարելու դեպքում՝ տուժանքի մասին համաձայնագիրը գլխավոր հաշվապահի մասով պետք է էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվի այդ կազմակերպության լիազորած անձի կողմից.

3. եթե հաշվապահական հաշվառումը վարվում է կազմակերպության ղեկավարի կողմից անձամբ, ապա տուժանքի մասին համաձայնագիրը ներկայացվում է առանց գլխավոր հաշվապահի ստորագրության: Ընդ որում, եթե տուժանքի մասին համաձայնագիրը ներկայացվել է միայն կազմակերպության ղեկավարի ստորագրությամբ,

ապա մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, նկատի ունենալով, որ տվյալ դեպքում հաշվապահական հաշվառումը վարվում է կազմակերպության ղեկավարի կողմից անձամբ:

ՀՀ ֆինանսների նախարարի 02.08.2013թ. թիվ 667-Ա հաստատված օրինակելի ձևերի համաձայն՝ գնման ընթացակարգի հրավերի հավելված թիվ 9-ում ներկայացված տուժանքի մասին համաձայնագրի 1.1 կետում գնման առարկայի անվանումի դաշտը՝ լրացվում է Պատվիրատուի կողմից:

«Արտֆլոր» ՍՊԸ-ի հայտում տուժանքի մասին համաձայնագիրը (հավելված թիվ 9) սահմանված կարգով ստորագրված է եղել Ընկերության հաշվապահի գրաֆիկական և տնօրենի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ինչպես նաև Ընկերության կողմից ներկայացված տուժանքի մասին համաձայնագրի 1.1 կետում գնման առարկայի անվանումը դաշտում նշվել է գնման առարկայի ամբողջական անվանումը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.03.2017թ. թիվ 2 արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ «Արտֆլոր» ՍՊԸ-ի հայտի ապահովումը՝ թիվ 9 հավելվածը ներկայացվել է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով, որտեղ բացակայում է գլխավոր հաշվապահի էլեկտրոնային թվային ստորագրությունը, ինչպես նաև սխալ է նշվել գնման առարկայի անվանումը, ինչով պայմանավորված գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել «Արտֆլոր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

Այսպիսով Կենտրոնը գտնում է, որ ՀՀ Շիրակի մարզպետարանի կողմից «Արտֆլոր» ՍՊԸ-ի հայտը մերժելու արդյունքում պահպանվել են Օրենքի 31-րդ հոդվածով և Կարգի 35-րդ կետի 9-րդ ենթակետով սահմանված պահանջները, քանի որ Ընկերությունը տուժանքի մասին համաձայնագիրը (հավելված թիվ 9) սահմանված կարգով ստորագրված է եղել հաշվապահի գրաֆիկական՝ այլ ոչ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ինչը ըստ ՀՀ ֆինանսների նախարարության 28.03.2017թ. N 04/73-1/5407-17 պարզաբանման՝ ենթակա է մերժման:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի կողմից Ընկերության մերժման այն հիմքին, որ վերջինս սխալ է նշել գնման առարկայի անվանումը, ինչը նույնպես հիմք է հանդիսանում «Արտֆլոր» ՍՊԸ-ի հայտը մերժելուն, ապա հայտնում ենք, որ ՀՀ ֆինանսների նախարարի 02.08.2013թ. թիվ 667-Ա հաստատված օրինակելի ձևերի համաձայն՝ գնման ընթացակարգի հրավերի հավելված թիվ 9-ում ներկայացված տուժանքի մասին համաձայնագրի 1.1 կետում գնման առարկայի անվանումի դաշտը՝ լրացվում է

Պատվիրատուի կողմից, ուստի վերջինիս կողմից ընկերության հայտը այս մասով մերժելը անհիմն է և ոչ իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից՝ Կենտրոնը առաջարկում է «Արտֆլոր» ՍՊԸ-ի 20.03.2017թ.-ի բողոքի մերժել:

Գնումների աջակցման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝

Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման
բաժնի պետ՝

Ռ.Մկրտչյան

Գնումների բողոքարկման և ահազանգման
բաժնի գլխավոր մասնագետ՝

ԳԲԽ-35/17 բողոքը

քննող հանձնաժողովի քարտուղար՝

Ա.Մկրտչյան